եւ տղաներին դերի վարած էր տեսնում. անօրէն Պարսիկ զէնուորները ընդհանուր խառնակութեան միջոցին յափշտակում էին հայ դեղանի կոյսերին եւ պատանիներին ու փախցնում, իրանց անասնական կիրքն յագեցնելու ու պղծելու համար: Ո՞րքան մայրեր անզաւակ մնացին, ո՞րքան հայ առաքինի կանայք բռնաբարուեցան. Աստուած միայն գիտէ:

"Ահա այսպիսի սարսափելի դառնութեան մէջ հայ ժողովուրդն անցաւ Արաքսը, որի յորձանքն, անշուշտ, յորդացաւ ողորմելի հայ աղջիկների, երեխաների, պատանիների արտասուքով ու արիւնով:"

Ջուղայեցիների գաղթականութիւնն ընդհանուր ժողովրդի այդ մեծ տարագրութիւնից առանձին կատարուեց, մի քանի օրից յետոյ: Շահաբբաս յանձնեց վրացի իշխան Թահմազ Ղուլի Բէգին, որ պատանդ էր Պարսից մօտ եւ ուրացել էր քրիստոնէական հաւատը, չուեցնել Ջուղայեցիներին: Գալով Ջուղա, մունետիկների ձեռքով հրատարակեց Շահի հրամանն եւ ստիպեց անմիջապէս չուել. Ջուղայեցիներն երկար աղաչանքներով եւ թանկագին ընծաներով հազիւ կարողացան համոզել նրան 3 օր ժամանակ տալ իրանց: Որովհետեւ բեռնակիր անասունների թիւը շատ քիչ էր եւ բաց ի դրանից, Ջուղայեցիները յոյս ունէին վերադառնալու, ուստի իրանց հետ վերցնելով թանկագին իրերը, մնացած գոյքը գաղեցին եւ թաղեցին զանազան տեղերում: Ամբողջ ժողովուրդն հաւաքուելով մի տեղ, Ս. Աստուածածնի եկեղեցու առաջ,